

Agreement number: 81297265

Project processing number: 18.2062.0-009.00

GIZ Program: ECOServe Armenia

Project: **Building Resilience to Enhance Food Security: Establishment of a Circular AgroFood Model at the ANAU-Balahovit Farm in Armenia**

Recipient: **Armenian National Agrarian University Foundation (ANAU)**

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Պարարտանյութերի/կենսահումուսի, կենսահեղուկի փորձարկում ընտրված մշակաբույսերի համար՝ բաց եւ փակ գրունտում

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը հրավիրում է որակավորված կազմակերպություններին «Հայաստանում շրջանաձեւ ագրոպարենային մոդելի ներդրում ՀԱԱՀ-ի Բալահովիտի տնտեսությունում» նախագծի շրջանակում ստորել ներկայացված ծառայությունների համար գնառաջարկ տրամադրելու:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը «Հայաստանում շրջանաձեւ ագրոպարենային մոդելի ներդրում ՀԱԱՀ-ի Բալահովիտի տնտեսությունում» նախագիծն իրականացնում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության եւ զարգացման նախարարության (BMZ) պատվիրակմամբ՝ Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ/ԳՍՀԸ) ECOserve Հայաստան ծրագրի աջակցությամբ:

Տվյալ հայտարարության բաղկացուցիչ մասերն են՝

Մասնակցության չափանիշները եւ գնահատման կարգը

- Հայտ կարող են ներկայացնել ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձինք:
- Հայտատուն կարող է հանդես գալ համատեղ գործունեությամբ (ՀԳ), որի դեպքում բոլոր անդամները միասին պատասխանատվություն են կրում պայմանագրի լիարժեք իրականացման համար:
- Պայմանագիրը շնորհվում է բավարար գնահատված հայտերից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած հայտատուին նախապատվություն տալու սկզբունքով:

Ներկայացվող հայտի բովանդակությունը

Հայտատուն իր հայտում պետք է ներառի՝

- Մասնակցի ստորագրված հայտի արժեքը: Գնառաջարկը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները, այդ թվում՝ հարկեր, տուրքեր եւ այլն:
- Իրավաբանական անձի/կազմակերպության պետական ռեգիստրում գրանցման վկայականի պատճեն:
- Հայտատուի փորձը այս ոլորտում հավաստող փաստաթղթեր:

Հայտերի ներկայացման կարգը

- Հայտը կարելի է ներկայացնել թղթային եւ էլեկտրոնային տարբերակով մինչեւ սույն թվականի **հոկտեմբերի 19-ը ժամը 12:00-ն`** Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հիմնադրամ, ՀՀ, ք. Երեւան Տերյան 74 հասցեով կամ ուղարկել hovh.anna.isyan@gmail.com էլհասցեով:
- «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը իրեն իրավունք է վերապահում ընդունելու կամ մերժելու որեւէ հայտ եւ չեղյալ համարելու մրցութային գործընթացը եւ մերժելու բոլոր հայտերը ցանկացած ժամանակ նախքան պայմանագրի շնորհումը` առանց որեւէ պարտավորության ենթարկելու տվյալ Հայտատուին կամ Հայտատուներին, կամ առանց բացատրություն տալու Հայտատուին կամ Հայտատուներին «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի գործողությունների հիմքերի վերաբերյալ:
- Հարցերի դեպքում կարող եք կապ հաստատել ծրագրի համակարգողի հետ` hovh.anna.isyan@gmail.com էլհասցեով կամ զանգահարել +37494 48 87 85 հեռախոսահամարով:

Մատուցվող ծառայությունների նկարագրությունը

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը «Հայաստանում շրջանաձեւ ագրոպարենային մոդելի ներդրում ՀԱԱՀ-ի Բալահովիտի տնտեսությունում» նախագծի շրջանակում ՀՀ Կոտայքի մարզի Բալահովիտ համայնքում գործող փորձացուցադրական տնտեսությունում հիմնել է գոմաղբից պարարտանյութ/կենսազանգված (կենսահումուս) ստանալու փորձացուցադրական մոդելներ.

1. միկրոօրգանիզմների կիրառմամբ` չոր եւ հեղուկ կենսազանգվածի ստացման համար,
2. պարզ կոմպոստացման տեխնոլոգիայով` չոր պարարտանյութի ստացման համար,
3. որդակոմպոստացման (կարմիր կալիֆորնիական որդեր) տեխնոլոգիայի կիրառմամբ` չոր պարարտանյութի ստացման համար:

Փորձարարական մոդելներում ստացված **պարարտանյութը/կենսազանգվածը, կենսահեղուկը** անհրաժեշտ է փորձարկել ընտրված մշակաբույսերի համար` բաց եւ փակ գրունտում, ինչպես նաեւ նույն մշակաբույսերի համար փորձարկել **ագոտական սելիտրա Ts-2-ը**, փորձարկվող 5 արտադրանքները ընտրված 4 մշակաբույսերի համար անհրաժեշտ է իրականացնել յուրաքանչյուրը նվազագույնը 1 քմ մակերեսով տարածքի վրա:

Ընտրված մշակաբույսերը

1. Լոլիկի սածիլ
2. Լոլիկ
3. Վարունգ

4. Կադամբ

Փորձարկվող պարարտանյութը/կենսազանգվածը, կենսահեղուկը

1. միկրոօրգանիզմների կիրառմամբ՝ չոր կենսազանգված
2. միկրոօրգանիզմների կիրառմամբ՝ կենսահեղուկ
3. պարզ կոմպոստացման տեխնոլոգիայով՝ չոր պարարտանյութ
4. որդակոմպոստացման տեխնոլոգիայի կիրառմամբ՝ չոր պարարտանյութ
5. ազոտական սելիտրա Ts-2

Մշակաբույսերի կիրառման ժամանակ արձանագրվող նվազագույն ցուցանիշները պետք է ներառեն՝

1. վերլուծություն հանքայնացված կենսազանգվածում (հեղուկի եւ չորի դեպքում) սննդատարրերի պարունակության վերաբերյալ,
2. բաց եւ փակ գրունտներում մշակության միջոցով ստացված ցուցանիշների հավաքում եւ վերլուծություն ստորեւ ներկայացված աղյուսակների համաձայն,
3. մշակության բոլոր փուլերի լուսանկարում:

Աղյուսակ 1. Ֆենոլոգիական ցուցանիշներ						
N	Տարբերակներ	Օրերի թիվը զանգվածային ծլումից մինչև՝				Բերքատվության տեսողությունը, օր
		Ծաղկում	Պտղակալում	Առաջին բերք	Վերջին բերք	
Ընտրված մշակաբույսի անվանումը						
1	միկրոօրգանիզմների կիրառմամբ՝ չոր կենսազանգված					
2	միկրոօրգանիզմների կիրառմամբ՝ կենսահեղուկ					
3	պարզ կոմպոստացման տեխնոլոգիայով՝ չոր պարարտանյութ					
4	որդակոմպոստացման տեխնոլոգիայի կիրառմամբ՝ չոր պարարտանյութ					
5	ազոտական սելիտրա Ts-2					

Աղյուսակ 2. Բերքատվության ցուցանիշներ						
N	Տարբերակներ	Վաղ բերք Կգ/ մետր քառ	Վաղ բերքի հավելում %	Ընդ. բերք Կգ/ մետր քառ	Բերքի հավելու մ,%	Բերքի միջին զանգված, գրամ
Ընտրված մշակաբույսի անվանումը						
1	միկրոօրգանիզմների կիրառմամբ՝ չոր կենսազանգված					
2	միկրոօրգանիզմների կիրառմամբ՝ կենսահեղուկ					
3	պարզ կոմպոստացման տեխնոլոգիայով՝ չոր պարատանյութ					
4	որդակոմպոստացմա ն տեխնոլոգիայի կիրառմամբ՝ չոր պարարտանյութ					
5	ագոտական սելիտրա Ts-2					

Տնեսագիտական տվյալների հավաքում

Պետք է հաշվառել մշակաբույսերի անեցման եւ բերքի ստացման ընթացքում անհրաժեշտ տվյալներն ըստ աղյուսակ 3-ի:

Աղյուսակ 3. Տնեսագիտական տվյալներ					
N	Տվյալի անունը	Չափման միավորը	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը	Լրացուցիչ պարզաբանում
1	Ընդհանուր նկարագրություն՝ մշակաբույսի ընտրության, սորտի, անեցման եղանակի (բաց, թե փակ գրունտ կամ այլ եղանակ)				
2	Սերմի քանակը	գ			
3	Պարարտանյութի տեսակը եւ անվանումը	գ կամ կգ, կամ լ			
4	Թունաքիմիկատների տեսակը եւ անվանումը	գ կամ կգ, կամ լ			

5	Վեգետացիայի ընթացքում օգտագործվող այլ նյութերի ծախսը (ջուր, գազ, էլեկտրականություն եւ այլն)				
6	Մեքենաների կամ գյուղտեխնիկայի ծախսեր				
7	Աշխատուժի ծախսը բույսի աճեցման եւ բերքահավաքի ժամանակ	օր կամ ժամ/մարդ			
8	Սասնագետի ծախսը				
9	Այլ անուղղակի ծախսեր (կազմակերպական այլ ծախսեր, տրանսպորտ, վարչական ծախսեր)				
10	Ստացված բերքի քանակը	կգ			
11	Ստացված բերքի եւ դրա որակական հատկանիշների մասին տեղեկություններ				
12	Այլ տեղեկություններ, որոնք էական ազդեցություն կունենան բույսի վրա կատարված ծախսերի եւ ստացված եկամուտների վրա				

Մշակության ընթացքում անհրաժեշտ է իրականացնել լաբորատոր հետազոտություններ՝ պահպանելով Աղյուսակ 4-ում նշված ցուցանիշները:

Աղյուսակ 4. Լաբորատոր նմուշառումների՝ ագրոքիմիական անալիզների ցանկը		
Հ/Հ	ID	Անվանում
1	NO ₃ ⁻	Նիտրատային ազոտ
2	NH ₄ ⁺	Ամոնիումային ազոտ
3	P ₂ O ₅	Փոսֆոր
4	K ₂ O	Կալիում
13	CO ₂	Կարբոնատ

14	Ca ²⁺	Կալցիում
15	Mg ²⁺	Մագնեզիում
16	EC	Էլեկտրահաղորդականություն (լուծված աղերի քանակը)
17	pH	Ջրածնային ցուցիչ
18	%C	Օրգանական նյութ (հումուս)
21		Նեմատոդների հայտնաբերում

Ծառայության մատուցման գնառաջարկների տրամադրման

Նմուշային Ձեռ (ՀԱՎԵԼՎԱԾ 1)

_____ / կազմակերպության անուն, գրանցման համար, հասցե, ղեկավարի անուն ազգանուն/ սույն գնառաջարկով ներկայացնում է հետաքրքրությունն Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հիմնադրամին մատուցելու **Պարարտանյութերի/կենսազանգվածի, կենսահեղուկի փորձարկում ընտրված մշակաբույսերի համար՝ բաց եւ փակ գրունտում** հայտարարության տեխնիկական առաջադրանում նշված **ծառայությունները ամբողջական փաթեթով:**

Նշված ծառայությունների մատուցման համար ներկայացվում է գնառաջարկը կազմում է _____ ՀՀ դրամ, որը ներառում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը:

Գնառաջարկին կից ներկայացնում ենք կազմակերպության փորձը այս ոլորտում եւ գրանցման վկայականի պատճենը:

Սույնով հայտնում ենք, որ հասկանում են, որ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հիմնադրամը չի կրում պարտավորություն մեր առաջարկը ընդունելու, իսկ ընդունելու դեպքում նշված ծառայությունները կարող են փոփոխվել՝ կապված ծրագրի զարգացումների հետ:

Կազմակերպության ղեկավարի անուն ազգանուն

Ամիս ամսաթիվ՝
Ստորագրություն՝
Կնիք՝
Հեռախոսահամար՝
Էլ հասցե՝